որ առաւելեալ էր քաղցր եւ բարի բնութիւն, հնդից որդոց եղեալ հայր, առաջնոյն Լեւոն, որ յանուն հաւուն իւրոյ»: Ընդարձակ յիշատակարանը տալիս է տեղեկութիւններ ստացողի եւ կաթուղիկոսի ազգականների մասին: Ձեռագրի ծագման հետ կապուած են ընծայականը եւ շատ համառօտ յիշատակարաններ, նաեւ յետագայ ժամանակներին վերաբերեալ:

Ընծայականի եւ մանրանկարչութեան մասին կը խօսենք քիչ յետոյ:

Երրորդ աւետարանը բոլորդիր, մագաղաթի վերայ 1249 թուին գրուած է Կիւրակոս գրչի ձեռքով եւ Կոստանդին Կաթուղիկոսի հրամանով. կազմը արծաթապատ. ՉԴ= (1255) թուականից Կոստանդին Կաթուղիկոսի հրամանով: Այդ աւետարանը Լեւոն Գ. թագաժառանգ, ժամանակ, 1263 թուին նուիրում է իւր քրոջը Ֆիմիին ի մխիթարութիւն, որ իւր զաւակների հետ այցելութեան էր եկած հօրն ու եղբայրներին, Սիղոնի տէրութեան անկման հետեւանքով: Աւետարանը գտնւում էր Ն. Նախիջեւանի Ս. Լուսաւորիչ եկեղեցում, այժմ Երեւանում:*

Մի ուրիշ աւետարան փոքր դիրքով, սքանչելի բոլորգրով, ազնիւ մագաղաթի վերայ գրուած, գտնւում էր դարձեալ Ն. Նախիջեւանի Ս. Լուսաւորիչ եկեղեցում, այժմ Երեւան: Այդ աւետարանը մեզ համար առանձին արժէք ունի, որովհետեւ վերջում գտնւում էր ընծայականը Լեւոն Գ.-ի պատանեկութեան պատկերի հետ: Այդ պատկերը ընծայականի հետ արտանկարել եւ Մ. Աթոռի թանգարանին էր նուիրել Ն. Նախիջեւանցի նկարիչ Արծաթպանեանը, որից եւ լուսանկարչական վերարտադրութիւնը հրատարակել ենք շատ տարիներ առաջ:** Կաթուղիկոսի ընծայականի առաջին տողերն են.

Տն Կոստանդեա Կաթողիկոսի
Զաւետարանս այս (ը)ղձալի
Շնորհեալ սանոյն իւր Լեւոնի
Որդոյ Հեթում թագաւորի:

Աւետարանի յիշատակարանը կորած է, ուրեմն եւ ճիշտ թուականը որոշել կարող չենք. բայց հնարաւորութիւն ունինք մօտաւոր ժամանակը մատնանշել: Մի անծանօթ հեղինակի ժամանակագրութեան համեմատ՝ Լեւոն 35 տարեկան էր, երբ 1271 թուին թագաւոր օծուեցաւ.* գիտենք եւ նորա ամուսնութեան տարին Երուս.-ի No. 1260 աւետարանից, որ 1262 թուականն էր, գրուած եւ նկարազարդուած հէնց ի յիշատակ նորա ամուսնութեան. ա՛րդ, 1271-ից հանելով 35-ը կը գտնենք ծննդեան թուականը, որ կը լինի 1236, այդպէս է ընդունում եւ Ալիշան մեզ անյայտ հիմունքներով:** Լեւոնի պատանեկութեան պատկերը չէ կարող 15 տարեկանից վեր լինել, մօրուքի դեռ եւս ոչ մի նշան չունի երեսին: Այսպիսով կարող ենք Ձեռագրի համար մօտաւորապէս 1250 թիւը նշանակել, ծննդեան 1236-ի վերայ աւելացնելով 15 պատանեկութեան տարիները: Այդպէս է կարծում եւ Մեսրոպ եպիսկոպոս Տէր Մովսիսեան, բայց բոլորովին սխալ հիմունքներով:† Լեւոնի եւ Կեռանի ամուսնութեան աւետարանը գրուած է 1262-ին եւ ոչ 1267-ին: Լուսանկարչական վերարտադրութիւնը հրատարակել է եւ Մեսրոպ եպիսկոպոս:

* * *

Հինգերորդ Ձեռագիրը գրուած է եւ նկարազարդուած 1253 թուին Յովհաննէս (?) գրչի եւ նկարչի ձեռքով: Այս աւետարանը մենք տեսել ենք, նկարագրել եւ լուսանկարել 1911 եւ 1914 թ. թ. Կ. Պոլսում, որպէս սեպհականութիւն Ազգային Մատենադարանի No. 68: Մեզնից առաջ տեսել է այնտեղ եւ Մեսրոպ եպիսկոպոսը. բայց այժմ գտնւում է Վաշինգտոնի Freer Galery of Art-ում: Յովհաննէս անուան առաջ հարցական ենք դնում, որովհետեւ գրուած է աւելի փոքր գրերով տողից վերեւ, թէեւ համարում ենք նոյն գրչի գործ:

Գլխաւոր յիշատակարանը (569 եր.) տալիս է մեզ կարեւոր տեղեկութիւններ Կոստանդին Կաթուղիկոսի անձի, ընտանիքի եւ թագաւորական տան անդամների մասին, որ քաղուածօրէն մէջ ենք բերում այստեղ: Յիշատակարանն սկսւում է համառօտ ներբողով սիրոյ յաւիտենական նշանակութեան

---

*Զ-ի յիշատակարանից օգտուել է Ալիշան, Սիսուան եր. 146, առանց յիշելու տեղը: Նոյն Ֆիմին մի երկրորդ Ձեռագիր՝ Սաղմոս եւ Յովբ «ի մխիթարութիւն» ստացել է իւր հօրեղբայր Յովհաննէս արքայեղբօր կողմից (Ալիշ. Սիսուան 145):

**Լումայ 1902 թ.;

*Սամուէլ Անեցի, Էջմիածնի տպագրութիւն. եր. 152:

**Սիսուան եր. 554:

†Ազգագր. Հանդէս XX եր. 16-17: